



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Դեկտեմբեր 6, 1995

Հոգեշնորհ
Տ. Անուշաւան Վրդ. Դանիէլեան
Նիւ Եորք.

Հոգեշնորհ Հայր Սուրբ,

Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ա. Օծուծին Տ. Տ. Գարեգին Ա. Հայրապետ՝ Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին այցելութիւն պիտի շնորհէ յառաջիկայ տարւան սկիզբը:

Որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Նորին Սրբութեան Հայրապետական անդրանիկ այցելութիւնը պիտի ըլլայ այս: Վեհափառ Հայրապետը Նիւ Եորք պիտի ժամանէ 1996 Յունուար 10-ին:

Այս գրութեամբ կը հրաւիրեմ ձեզ՝ որպէս զի մասնակցիք Հրաշափառի արարողութեան եւ Հայրապետական Ա. Պատարագին:

Հրաշափառի արարողութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի Յունուար 10, երեկոյեան ժամը 7.00-ին՝ Ա. Վարդան Մայր Տաճարին մէջ:

Հայրապետական Ա. Պատարագը՝ Կիրակի Յունուար 14, կէսօրէ ետք ժամը 2.00-ին՝ Սէյնթ Ման Տիլայն Մայր Տաճարին մէջ:

Ծնորհակալ պիտի ըլլամ եթէ ճախապէս զիս տեղեակ պահէք ձեր մասնակցութեան մասին:

Աղօթակից

Մարտիրոս Բենյ. Չեւեան

Մարտիրոս Բենյ. Չեւեան
Լուսարարապետ Ա. Վարդան Մայր Տաճարի